ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Անդրանիկ Փիլոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնակատար (պատվիրակության ղեկավար)

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2021թ. մայիսի 14-ից 16-ը

4. **Հրավիրող կողմը.**

Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և աղետների հետևանքների վերացման նախարարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցել ԱՊՀ ուժերի «Համալիր անվտանգություն-2021» («Комплексная безопасность 2021») անվտանգության սարքավորումների 13-րդ միջազգային սրահի աշխատանքներին:

6. **Քննարկված թեմաները.**

Սրահի շրջանակներում EMERCOM-ի Նոգինսկի փրկարարական կենտրոնի մարզադաշտում անցկացվեցին արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման համալիր ուժերի և միջոցների լայնածավալ ցուցադրական վարժանքներ, որոնց ընթացքում ներկայացվեցին բնածին և տեխնածին արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանն ուղղված համատեղ գործողությունները տարբեր իրավիճակներում (փրկարարական ստորաբաժանումների գործողությունները տարբեր սցենարներով պայմանական արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ժամանակ՝ երկաթուղային և օդային տրանսպորտում, լեռնահանքային և քիմիական գործարանում), ինչպես նաև տուժածներին օգնություն ցուցաբերելու ժամանակ նոր հրշեջ-փրկարարական և հատուկ սարքավորումների, նորարարական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում տեղի ունեցան երկկողմ հանդիպումներ ՌԴ Քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և աղետների հետևանքների վերացման նախարար Ե. Զինիչևի, Բելառուսի ԱԻ նախարար Վ. Սինյավսկիի, Ղազախստանի ԱԻ նախարար Յ. Իլյինի, Ղրղզստանի ԱԻ նախարար Բ. Աժիկեևի և Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության (ICDO) գլխավոր քարտուղար Մարիատոու Յափի հետ, որոնց ընթացքում քննարկվեցին երկկողմ համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր և նախանշվեցին արտակարգ իրավիճակների ոլորտում համագործակցության զարգացման նոր հեռանկարները:

ՌԴ Քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և աղետների հետևանքների վերացման նախարար Ե.Զինիչևի հետ հանդիպման ժամանակ քննարկվեցին նաև Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի հետագա զարգացման հեռանկարները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՌԴ ԱԻ նախարար Ե. Զինիչևի հետ քննարկումների արդյունքում որոշվեց Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի վարչության հերթական նիստն անցկացնել 2021թ. մայիսի 26-ին Երևանում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Երկկողմ հանդիպումների ընթացքում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին տարվա երկրորդ կեսին կազմակերպել փոխայցելություններ՝ երկկողմ և բազմակողմ համագործակցության ակտիվացման և փորձի փոխանակման նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

18.05.2021թ.